# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7/1

10 սեպտեմբերի 2024 թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 26 անդամներ:

Բացակա էին՝ Վահան Հունանյանը, Թորգոմ Համբարձումյանը, Սեմիկ Խուբեսարյանը, Աստղիկ Բեյբուտյանը, Զոյա Միքայելյանը, Կալիպսե Ասատրյանը, Վարդեվան Հակոբյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանը:**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Բադալյանը:**

ԼՍԵՑԻՆ

1. ***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հերթական յոթերորդ նստաշրջանի առաջին նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 165-Ա)*

ԼՍԵՑԻՆ

2. ***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ***

*ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու (այսուհետ՝ ավագանի) 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 171-Ն որոշման 1-ին կետով ընդունված կանոնակարգի 88-րդ և 89-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով ավագանու խմբակցությունների ղեկավարների՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին ուղղված գրությունները (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի օգոստոսին ՝ NN Ջ/1648, Ջ/1661, 1493 , թվարգրումներով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Ստեղծել ավագանու հերթական յոթերորդ նստաշրջանի՝ հինգ անդամից բաղկացած ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

2. Հաստատել հանձնաժողովի հետևյալ անհատական կազմը՝

1) Գևորգ Պասկևիչյան - «Բալասանյան դաշինք» խմբակցություն,
2) Քնարիկ Հարությունյան- «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
3) Սվետլանա Ադամյան- «Զարթոնք» խմբակցություն,
4) Հասմիկ Մարգարյան-«Հանրապետական» խմբակցություն,
5) Կալիպսե Ասատրյան- «Ապրելու երկիր» խմբակցություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման 2-րդ կետով հաստատված հանձնաժողովի կազմին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 166-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

*3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

***(Զեկ. ԿԱՐԵՆ ԲԱԴԱԼՅԱՆ)***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 171-Ն որոշման 1-ին կետով ընդունված կանոնակարգի 49-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Քնարիկ Հարությունյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունը (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի օգոստոսի 26-ին N Ջ/1706 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական գործող հանձնաժողովի նախագահի՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Շավարշ Արամյանի թեկնածությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Շավարշ Արամյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 167-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

### 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*(Զեկ. ԿԱՐԵՆ ԲԱԴԱԼՅԱՆ)*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 171-Ն որոշման 1-ին կետով ընդունված կանոնակարգի 49-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Քնարիկ Հարությունյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունը (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի օգոստոսի 21-ին N Զ/1659 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի նախագահի տեղակալի՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Անժելա Մ.Մաթոսյանի թեկնածությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անժելա Մ.Մաթոսյանին պաշտոնական իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 168-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

### 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*(Զեկ. ԼԵՆԱ ԶԻԼԱՎՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերի, 33-րդ հոդվածի 4-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի առաջարկը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 3-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1–ին կետի 1-ին «6 743 880 724 (վեց միլիարդ յոթ հարյուր քառասուներեք միլիոն ութ հարյուր ութսուն հազար յոթ հարյուր քսանչորս)» թիվը և բառերը փոխարինել «6 836 746 724 (վեց միլիարդ ութ հարյուր երեսունվեց միլիոն յոթ հարյուր քառասունվեց հազար յոթ հարյուր քսանչորս)» թվով և բառերով,

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «7 061 362 324 (յոթ միլիարդ վաթսունմեկ միլիոն երեք հարյուր վաթսուներկու հազար երեք հարյուր քսանչորս) » թիվը և բառերը փոխարինել «7 154 228 324 (յոթ միլիարդ մեկ հարյուր հիսունչորս միլիոն երկու հարյուր քսանութ հազար երեք հարյուր քսանչորս) » թվով և բառերով:

2. Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1,2,3,4, հավելվածների:

3.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ կատարել համապատասխան փոփոխությունները՝ օրենքով սահմանված կարգով:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 169-Ն)*
**ԼՍԵՑԻՆ**

***6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ 250 000 000 (ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆ ՄԻԼԻՈՆ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԸ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասի» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի երկրորդ եռամսյակի համար նախատեսված 510 709 000(հինգ հարյուր տաս միլիոն յոթ հարյուր ինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամից 250 000 000 (երկու հարյուր հիսուն միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամն ուղղել բյուջեի ֆոնդային մաս:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ կատարել սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունը՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 170-Ա)*
**ԼՍԵՑԻՆ**

***7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 8 (ՈՒԹ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N-119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Ծիածան - մսուր մանկապարտեզ», «Շերամի անվ. Թիվ 5 երաժշտական դպրոց», «Գոհար-մսուր մանկապարտեզ», «Ջրային ձևերի մանկապատանեկան մարզադպրոց», «Մանկապատանեկան արվեստի պալատ», «Լիլիթ-մսուր մանկապարտեզ», «Լիանա-մսուր մանկապարտեզ», «Հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) տնօրենների գրությունները՝ ուղղված Գյումրի համայնքի

ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված՝ 2024 թ. հուլիսի 16-ին N 12084, հունիսի 17-ին N 10536, հունիսի 28-ին N 11224, հունիսի 26-ին N 11104, օգոստոսի 16-ին N 13856, օգոստոսի 26-ին N 14279, օգոստոսի 27-ին N 14638, օգոստոսի 15-ին N 13770 թվագրություններով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Կազմակերպություններին գույքի ձեռքբերման, միջոցառման անհրաժեշտ ծախսերի, իրականացրած վերանորոգման աշխատանքների, ջեռուցման համար վառելափայտ ձեռքբերելու նպատակով որպես նվիրատվություն հատկացնել 4 159 900 (չորս միլիոն մեկ հարյուր հիսունինը հազար ինը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածի օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպությունների տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 171-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱԼԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի Լիլիթ Թովմասյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված 2024 թվականի օգոստոսի 27-ի զեկուցագիրը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Մանկապատանեկան արվեստի պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի առաջին հարկի վերանորոգման աշխատանքներն իրականացնելու համար հատկացնել 4 745 942 (չորս միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար ինը հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (5113) «շենքերի ու շինությունների

կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 172-Ա)*
**ԼՍԵՑԻՆ**

***9. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 88 ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով սոցիալապես անապահով թվով 88 (ութսունութ) քաղաքացիների՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Թվով 88 (ութսունութ) անձանց որպես դրամական օգնություն հատկացնել 1 540 000 (մեկ միլիոն հինգ հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 173-Ա)*
**ԼՍԵՑԻՆ**

***10.«ԽՈՐԱՆ ԱՐԴ» ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով «Խորան Արդ» ինտելեկտուալ կենտրոն հասարակական կազմակերպության (այսուհետ կազմակերպություն) նախագահ՝ Սեյրան Մարտիրոսյանի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունները (համայնքապետարանում համապատասխանաբար մուտքագրված՝ 2024 թվականի մարտի12 -ին և օգոստոսի 30-ին NN 4801,14629 թվագրություններով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Կազմակերպությանը՝ որպես նվիրատվություն, հատկացնել 500 000 (հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 2024 թվականի դեկտեմբերի 21-ից 22-ը

անցկացվելիք համահայկական 25-րդ ինտելեկտուալ փառատոնի լիարժեք կազմակերպման և անցկացման համար:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3, Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպություն նախագահ Սեյրան Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 174-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՖԵՍՏԻՎԱՌ » ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻՆ ԱՋԱԿՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, Հայ աստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017թվականի նոյեմբերի 06-ի N119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 9-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն՝ Հովհաննես Մովսիսյանի համայնքի ղեկավարին ուղղված դիմումը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հուլիսի 16-ի N 02//14031թվագրությամբ)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.
1. Հավանություն տալ Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեից հատկացնել 2 434 350 (երկու միլիոն չորս հարյուր երեսունչորս հազար երեք հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ «Ֆեստիվառ» երաժշտական փառատոնի շրջանակներում անցկացրած տաղավարների վարձակալության նպատակով:
2. Հավանություն տալ իրականացված անհետաձգելի համարված գնումը մեկ անձի կիրառմամբ՝ առանց գնման հայտարարությունը նախապես հրապարակելու՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն:
3. Հանձնարարել, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 1/1/1 գործառական դասակարգման (4216) «Գույքի և սարքավորումների վարձակալություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությունից առաջ նախագծի վերաբերյալ հնչեցին իրարամերժ կարծիքներ և տարաձայնություններ, տեղի ունեցավ քննարկում և քվեարկության արդյունքներով որոշումը չընդունվեց:
Կողմ (11)Դեմ (10) Ձեռնպահ (5)

| Կողմ -11 | Դեմ -10 | Ձեռնպահ -5 |
|---|---|---|
| Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ | Ա.ՊԱՊԻԿՅԱՆ | Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ |
| Լ. ՍԱՆՈՅԱՆ | Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | Կ. ՍՈՍՅԱՆ |
| Գ. ՄԵԼԻՔՅԱՆ | Շ. ԱՐԱՄՅԱՆ | Ս. ԱԴԱՄՅԱՆ |
| Մ. ՍԱՀԱԿՅԱՆ | Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | Ն.ՄԻՐՋՈՅԱՆ |
| Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ | Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ |
| Տ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | Ն.ԲԵԳՋԱԴՅԱՆ | |
| Ն. ՊՈՂՈՍՅԱՆ | Վ. ՀԱԿՈԲՅԱՆ | |
| Խ.ՎԱՐԱԺՅԱՆ | Հ. ՍՏԵՓԱՆՅԱՆ | |
| Գ. ՊԱՍԿԵՎԻՉՅԱՆ | Պ. ԳԵՎՈՐԳՅԱՆ | |
| Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | Կ. ՄԱԼԽԱՍՅԱՆ | |
| Հ. ԱՍԱՏՐՅԱՆ | | |

**(Որոշումը չի ընդունվել)**

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊՐՈՖԵՍՈՐ ԱԶԱՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ՇՊՀ սպորտի և արվեստի ամբիոնի պրոֆեսոր Ազատ Մաթևոսյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումը (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի օգոստոսի-23-ին, N 14201 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակիչ Ազատ Մաթևոսյանին ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության նպատակով որպես դրամական օգնություն հատկացնել 100 000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ազատ Մաթևոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 175-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

## 13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ՏԵՂԱԴՐՎՈՂ ԱՄԱՆՈՐՅԱ ՆՈՐ ՏՈՆԱԾԱՌԻ ԵՎ ՆՈՐ ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՈՒ ՀԻՆ ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վարդանանց հրապարակում տեղադրվող ամանորյա տոնածառի մետաղական կառուցվածքը վնասված է և հնարավոր չէ վերանորոգել, որի հետագա շահագործումը վտանգավոր է: Անհրաժեշտություն կա ձեռք բերելու արհեստական եղևնու ճյուղերից պատրաստված 25-30 մետր բարձրությամբ նոր տոնածառ և նոր զարդարանքներ, ինչպես նաև ունեցած զարդարանքները վերանորոգելու:

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 3-րդ կետով և հիմք ընդունելով բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժ/պ Մարտին Սարուխանյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված 2024 թվականի սեպտեմբերի 06-ի զեկուցագիրը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1 Հատկացնել 75 000 000 (յոթանասունհինգ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, որից 68 000 000 (վաթսունութ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը հատկացվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վարդանանց հրապարակում տեղադրվող արհեստական եղևնու ճյուղերից պատրաստված 25-30 մետր բարձրությամբ ամանորյա նոր տոնածառի և նոր զարդարանքների ձեռք բերման համար, 7 000 000 (յոթ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը Գյումրի համայնքին պատկանող հին զարդարանքների վերանորոգման համար:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (5129) «Այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից 68 000 000 (վաթսունութ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ և (4239) «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ 7 000 000 (յոթ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 176-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

## 14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի

№656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի կողմից 2024թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների.

1) գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 413,58 (չորս հարյուր տասներեք ամբողջ հիսունութ հարյուրերրորդական) հեկտար, որից վարելահող՝ 88,43(ութսունութ ամբողջ քառասուներեք հարյուրերրորդական) հեկտար, արոտ՝ 323,87 (երեք հարյուր քսաներեք ամբողջ ութսունյոթ հարյուրերրորդական ) հեկտար,

2) բնակավայրի հողեր 2731,57(երկու հազար յոթ հարյուր երեսունմեկամբողջ հիսունյոթհարյուրերրորդական) հեկտար, որից տնամերձ՝ 367,64 (երեք հարյուր վաթսունյոթ ամբողջ վաթսունչորս հարյուրերրորդական) հեկտար, հասարակական՝ 126,95(մեկ հարյուր քսանվեցամբողջ իննսունհինգհարյուրերրորդական) հեկտար, խառը կառուցապատման՝ 34,47 (երեսունչորս ամբողջ քառասունյոթհարյուրերրորդական) հեկտար, ընդհանուր օգտագործման՝ 391,07 (երեք հարյուր իննսունմեկամբողջ յոթհարյուրերրորդական) հեկտար, այլ հողեր՝ 1038.76(մեկ հազար երեսունութամբողջ յոթանասունվեցհարյուրերրորդական) հեկտար,

3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր 367,15 (երեք հարյուր վաթսունյոթամբողջ տասնհինգհարյուրերրորդական) հեկտար,

4) էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր 423,12(չորս հարյուր քսաներեք ամբողջ տասներկու հարյուրերրորդական) հեկտար,

5) հատուկ պահպանվող տարածքների հողեր 94,11 (իննսունչորս ամբողջ տասնմեկ հարյուրերրորդական) հեկտար,

6) հատուկ նշանակության հողեր 236,41(երկու հարյուր երեսունվեց ամբողջ քառասունմեկհարյուրերրորդական) հեկտար,

7) անտառային հողեր 150,84 (մեկ հարյուր հիսուն ամբողջ ութսունչորս հարյուրերրորդական) հեկտար,

8) ջրային հողեր 12,72(տասներկու ամբողջ յոթանասուներկու հարյուրերրորդական) հեկտար,

9) քաղաքացիների սեփականության հողեր 453,65 (չորս հարյուր հիսուներեքամբողջ վաթսունհինգ հարյուրերրորդական) հեկտար,

10) իրավաբանական անձանց հողեր 69,58 (վաթսունիննամբողջ հիսունութ հարյուրերրորդական) հեկտար,

11) համայնքային սեփականության հողեր 3207,76(երեք հազար երկու հարյուր յոթամբողջ յոթանասունվեցհարյուրերրորդական) հեկտար,

12) պետական սեփականության հողեր 684,96 (վեց հարյուր ութսունչորսամբողջ իննսունվեցհարյուրերրորդական) հեկտար,

13) վարչատարածք՝ 4429,50 (չորս հազար չորս հարյուր քսանինն ամբողջ հինգ տասնորդական) հեկտար:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 177-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Ղեկավարելով «Տեղականինքնակառավարմանմասին» օրենքի 18-րդհոդվածի 1-ին մասի 21-րդկետով,

«Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժգույքի շուկայական արժեքին մոտա րկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին»օ րենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 33-րդ, 34-րդ, և 35-րդ կետերի պահանջները և որոշման հավելվածում նշված դիմումատուների Գյումրի համայնքի ղեկավարին ուղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված և դրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված շենք-շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ շինությունները կառուցողներին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նախաբանում նշված դիմումատուներին պատշաճ կերպով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 178-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

### *16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատմաննպատակովառանձնացվածհողամասերն օտարել աճուրդովև սահմանել աճուրդի մեկնարկայինգներնուպայմանները՝ համաձայն հավելվածի:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 179-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

### *17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 17/14 ՀԱՍՑԵԻ 300,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետի ա. պարբերությունով, 25-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի 2024 թվականի հունիսի 5-ի N 01/17/05209-2024 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վ. Սարգսյան փողոց N17/14 հասցեի 300,0 (երեք հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողեր գործառնական նշանակությունից բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետին և Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունը արտացոլել Գյումրի համայնքը(Գյումրի քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթում և ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-14 Դեմ-8 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 180-Ա)*
**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Վ.ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 17/16 ՀԱՍՑԵԻ 200,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերությունով, 25-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի 2024 թվականի մայիսի 16-ի N 01/17/04573-2024 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է**.
1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վ. Սարգսյան փողոց N17/16 հասցեի 200,0 (երկու հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողեր գործառնական նշանակությունից բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետին և Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունը արտացոլել Գյումրի համայնքը (Գյումրի քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթում և ընթացիկ քաղաքաշինական քարտեզում: 3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-14 Դեմ-10 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 181-Ա)*
**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ N 37/3 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿ-4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի N 37/3 հասցեի 88.81 (ութսունութ ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Շիրակի մարզի Գյումրի քաղաքի էլեկտրոնային կադաստրային քարտեզի, հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամաս: Նշված հողամասը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն գրանցելու նպատակով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, քաղաքաշինության մասին օրենքի 143-րդ հոդվածի 9-րդ մասով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Փոփոխել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի N 37/3 հասցեի 88.81 (ութսունութ ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը, այն համապատասխանեցնել Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերին՝ նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, իսկ գործառնական նշանակությունը՝արդյունաբերական օբյեկտների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 182-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՓՈՂՈՑԻ N 56/10 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿ-4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի փողոցի N 56/10 հասցեի ավտոտնակի զբաղեցրած 54,64 (հիսունչորս ամբողջ վաթսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի 52,29 (հիսուներկու ամբողջ քսանինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հատվածը՝ համաձայն էլեկտրոնային կադաստրային քարտեզի, հանդիսանում է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության հողամաս: Նշված շինությունը և հողամասը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն

գրանցելու նպատակով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 9-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի **Գյումրի համայնքի ավագանին որոշում է**.

1.Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի փողոցի N 56/10 հասցեի ավտոտնակի զբաղեցրած 54,64 (հիսունչորս ամբողջ վաթսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման հատակագծին, որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 183-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 1-ԻՆ ՓՈՂՈՑ №2/4 ՀԱՍՑԵԻ 140.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿ-4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող Մուշ-2 թաղամաս 1-ին փողոցի № 2/4 հասցեի 140.0 (մեկ հարյուր քառասուն) քառակուսի մետր մակերեսով հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամաս (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N01062021-08-0051 վկայական), իսկ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի № 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով նույն հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, քաղաքաշինության մասին օրենքի 143-րդ հոդվածի 9-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է**.

1. Փոփոխել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամաս 1-ին փողոցի № 2/4 հասցեի 140.0 (մեկ հարյուր քառասուն) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը, այն համապատասխանեցնել

Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերին՝ նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:
Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 184-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ №29/8 ՀԱՍՑԵԻ 125.24 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿ-4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՍԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող Վ. Սարգսյան փողոցի №29/8 հասցեի 125.24 (մեկ հարյուր քսանհինգ ամբողջ քսանչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամաս (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N27062014-08-0018 վկայական), իսկ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի № 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով նույն հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, քաղաքաշինության մասին օրենքի 143-րդ հոդվածի 9-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Փոփոխել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վ. Սարգսյան փողոցի № 29/8 հասցեի 125.24 (մեկ հարյուր քսանհինգ ամբողջ քսանչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը, այն համապատասխանեցնել Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերին՝ նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:
Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 185-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՐՈ ՀԱԼԱԲՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 12/6 ՀԱՍՑԵԻ 42,31 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ***

## *ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*
## *(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասի N 6/11 հասցեի 300,0 (երեք հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասով սպասարկման օբյեկտն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Պայքար Խորենի Վալեսյանին, Նազելի Ավետիսի Կամսարյանին, Պարգև Խորենի Վալեսյանին և Անուշ Գառնիկի Պետրոսյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 01062023-08-0010 վկայական):

Քաղաքացի Պայքար Խորենի Վալեսյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 04072024-08-0032 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կարո Հալաբյան փողոցի N 12/6 հասցեի 42,31 (քառասուներկու ամբողջ երեսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով: Նկատի ունենալով, որ հողամասը որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Պայքար Խորենի Վալեսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հունիսի 06-ին N 11266 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացիներ Պայքար Խորենի Վալեսյանին, Նազելի Ավետիսի Կամսարյանին, Պարգև Խորենի Վալեսյանին և Անուշ Գառնիկի Պետրոսյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասի N 6/11 հասցեի 300,0 (երեք հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասով սպասարկման օբյեկտին հարակից, Կարո Հալաբյան փողոցի N 12/6 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 42,31 (քառասուներկու ամբողջ երեսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ սպասարկման օբյեկտի ընդլայնման նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 2888 (երկու հազար ութ հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 122191 (մեկ հարյուր քսաներկու հազար մեկ հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Պայքար Խորենի Վալեսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 186-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

*24.ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐՓԵՆԻԿ ԱՂԱՍՈՒ ՄԻՐԻՄԱՆՅԱՆԻՆ (2/4 ՄԱՍ), ՀՈՎՍԵՓ ՌԱԶՄԻԿԻ ՄԻՐԻՄԱՆՅԱՆԻՆ (1/4 ՄԱՍ) ՀԵՐՄԻՆԵ ՌԱԶՄԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ (1/4 ՄԱՍ) ՆՎԻՐԱՏՐՎԱԾ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ № 1 ՀԱՍՑԵՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՏԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 35.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)*

Հայաստանի Հանրապետության Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոց № 1 հասցեով հանրային բնակելի ֆոնդի տունը նվիրատրվել է քաղաքացիներ Արփենիկ Աղասու Միրիմանանին, Հովսեփ Ռազմիկի Միրիմանյանին և Հերմինե Ռազմիկի Խաչատրյանին (հիմք՝ Գյումրի համայնքի ղեկավարի 1997 թվականի օգոստոսի 30-ի N 630-Ա որոշում): Քաղաքացի Արփենիկ Միրիմանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված բնակելի տան պահպանման և սպասարկման համար, փաստացի զբաղեցրած 35.8 (երեսունհինգ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով: Նկատի ունենալով, որ օտարվող հողամասը որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 2-րդ մասով և հիմք ընդունելով քաղաքացի Արփենիկ Միրիմանյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հուլիսի 29-ին № 12773 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացիներ Արփենիկ Աղասու Միրիմանյանին (2/4 մաս), Հովսեփ Ռազմիկի Միրիմանյանին (1/4 մաս), Հերմինե Ռազմիկի Խաչատրյանին (1/4 մաս) ուղղակի վաճառքի միջոցով օտարել որպես ընդհանուր բաժնային սեփականություն իրենց նվիրատրված Սունդուկյան փողոց № 1 հասցեով հանրային բնակելի ֆոնդի տան պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 35.8 (երեսունհինգ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը՝ համաձայն կից տրվող հատակագծային ուրվանկարի:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 16177 (տասնվեց հազար մեկ հարյուր յոթանասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 579136 (հինգ հարյուր յոթանասունինը հազար մեկ հարյուր երեսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Արփենիկ Միրիմանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 187-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

*25.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՆՏԱՌԱՎԱՆԻ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ № 42/3 ՀԱՍՑԵԻ 183.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ*

## *ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մանուշյան փողոց № 33 հասցեի 941.04 (ինը հարյուր քառասունմեկ ամբողջ չորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը և բնակելի տունը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Սամվել Նորիկի Մխիթարյանին (1/2 մաս) և Հասմիկ Քյարամի Մանուկյանին (1/2 մաս) (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 03042023-08-0023 վկայական): Քաղաքացիներ Հասմիկ Մանուկյանը և Սամվել Մխիթարյանը դիմել են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20082024-08-0050 վկայական) Անտառավանի 3-րդ թաղամաս № 42/3 հասցեի 183.6 (մեկ հարյուր ութսուներեք ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով: Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Հասմիկ Մանուկյանի և Սամվել Մխիթարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի մայիսի 23-ին № 14301 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացիներ Սամվել Նորիկի Մխիթարյանին (1/2 մաս) և Հասմիկ Քյարամի Մանուկյանին (1/2 մաս) ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մանուշյան փողոց № 33 հասցեի 941.04 (ինը հարյուր քառասունմեկ ամբողջ չորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Անտառավանի 3-րդ թաղամաս № 42/3 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 183.6 (մեկ հարյուր ութսուներեք ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ընդլայնման նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 815551 (ութ հարյուր տասնհինգ հազար հինգ հարյուր հիսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Հասմիկ Մանուկյանին և Սամվել Մխիթարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 188-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***26.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՖՈՐԱԼԲԵՐԳԻ ՓՈՂՈՑ N 6/18 ՀԱՍՑԵԻ 70.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆորալբերգի փողոց N 6/18 հասցեի 70.0 (յոթանասուն) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 24062024-08-0001 վկայական)։ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) գլխավոր տնօրենի լիազորված անձ Սերգեյ Կակոսյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 24062024-08-0001 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆորալբերգի փողոց N 6/18 հասցեի 70.0 (յոթանասուն) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով։ Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով ընկերության գլխավոր տնօրենի լիազորված անձ Սերգեյ Կակոսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի սեպտեմբերի 29-ին N 20689 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է**.

1. Ընկերությանը ուղղակի վաճառքի միջոցով օտարել Ֆորալբերգի փողոց N 6/18 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 70.0 (յոթանասուն) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ որպես սեփականություն, ենթակայան տեղադրելու նպատակով։
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 1878 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 131460 (մեկ հարյուր երեսունմեկ հազար չորս հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ։
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերության գլխավոր տնօրենի լիազորված անձ Սերգեյ Կակոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 189-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

*27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ № 31/8 ՀԱՍՑԵԻ 11.15 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*
*(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի № 47/5 հասցեի 57.2 (հիսունյոթ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը և բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Սամվել Համլետի Գյունաշյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 01122022-08-0014 վկայական): Քաղաքացի Սամվել Համլետի Գյունաշյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 17072024-08-0032 վկայական) Ղանդիլյան փողոցի № 31/8 հասցեի 11.15 (տասնմեկ ամբողջ տասնհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով: Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Սամվել Համլետի Գյունաշյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի ապրիլի 3-ին № 6217 թվագրմամբ)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի **Գյումրի համայնքի ավագանին որոշում է**.

1. Քաղաքացի Սամվել Համլետի Գյունաշյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի № 47/5 հասցեի 57.2 (հիսունյոթ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Ղանդիլյան փողոցի № 31/8 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 11.15 (տասնմեկ ամբողջ տասնհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ որպես բակ:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 117231 (մեկ հարյուր տասնյոթ հազար երկու հարյուր երեսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սամվել Համլետի Գյունաշյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 190-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

*28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՅԳԱԲԱՑԻ 5-ՐԴ ՇԱՐՔ № 16 ՀԱՍՑԵԻ 39.15 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Այգաբացի 5-րդ շարք № 14/2 հասցեի 151.29 (մեկ հարյուր հիսունմեկ ամբողջ քսանինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը և բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Արսեն Հակոբիկի Առաքելյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 10022014-08-0002 վկայական): Քաղաքացի Արսեն Հակոբիկի Առաքելյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 12072024-08-0038 վկայական) Այգաբացի 5-րդ շարք № 16 հասցեի 39.15 (երեսունինն ամբողջ տասնհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով: Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Արսեն Հակոբիկի Առաքելյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի մայիսի 23-ին № 9052 թվագրմամբ)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացի Արսեն Հակոբիկի Առաքելյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Այգաբացի 5-րդ շարք № 14/2 հասցեի 151.29 (մեկ հարյուր հիսունմեկ ամբողջ քսանինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Այգաբացի 5-րդ շարք № 16 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 39.15 (երեսունինն ամբողջ տասնհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ որպես բակ:

2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 267551 (երկու հարյուր վաթսունյոթ հազարհինգ հարյուր հիսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արսեն Հակոբիկի Առաքելյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 191-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

## 29.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա.ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ № 11/2 ՀԱՍՑԵԻ 44.52 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա. Մյասնիկյան փողոցի № 9/2 հասցեի 60.0 (վաթսուն) (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 03082022-08-0049 վկայական) և Ա. Մյասնիկյան փողոցի № 9/3 հասցեի 53.0 (հիսուներեք) (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 02082022-08-0013 վկայական) քառակուսի մետր մակերեսներով հողամասերը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Հովհաննես Արտյոմի Մկրտչյանին: Քաղաքացի Հովհաննես Արտյոմի Մկրտչյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 23082024-08-0071 վկայական) Ա. Մյասնիկյան փողոցի № 11/2 հասցեի 44.52 (քառասունչորս ամբողջ հիսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով: Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Հովհաննես Արտյոմի Մկրտչյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունիսի 28-ին № 11161 թվագրմամբ)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացի Հովհաննես Արտյոմի Մկրտչյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա. Մյասնիկյան փողոցի № 9/3 հասցեի 53.0 (հիսուներեք) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Ա. Մյասնիկյան փողոցի №. 11/2 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 44.52 (քառասունչորս ամբողջ հիսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ընդլայնման նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 468083 (չորս հարյուր վաթսունութ հազար ութսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հովհաննես Արտյոմի Մկրտչյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 192-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

**30. *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ N 185/5 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46-րդ կետի «գ» ենթակետի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Երևանյան խճուղի N 185/5 հասցեի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 10062024-08-0046) բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ 0,208491 (զրո ամբողջ երկու հարյուր ութ հազար չորս հարյուր իննսունմեկ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրել օգտագործման՝ բարեկարգման և կանաչապատման նպատակով:

2. Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրման մրցույթի մեկնարկային վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 500000 (հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 10 (տասը) տարի:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 193-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

**31. *ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՌՈՒԲԵՆԻ ԻԳԻԹՅԱՆԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի 8-րդ, 10-րդ, 13-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի, 3-րդ ենթակետով և 3-րդ կետով հիմք ընդունելով քաղաքացի Անդրանիկ Իգիթյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի օգոստոսի 15-ին N 13772 թվագրությամբ)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել քաղաքացի Անդրանիկ Ռուբենի Իգիթյանին 1 (մեկ) տարի ժամկետով սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններում կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 194-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

**32.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 151-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի N 24/4 հասցեի 6,38 քառակուսի մետր մակերեսով ինքնակամ հարթակը և նրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցված 7,58 քառակուսի մետր մակերեսով հողամասը վարձակալության տրամադրելու և վարձավճարի չափ սահմանելու մասին» N 185-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) նախաբանից հանել «կողմից լիազորված անձ Ավետ Ավետիսյանի» բառերը,

2) որոշման 3-րդ կետում «Պայյանի կողմից լիազորված անձ Ավետ Ավետիսյանին» բառերը փոխարինել «Պայյանին» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 195-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

**33.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 59-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 15-ի «Հայաստանի Հանրապետությանը հողամաս նվիրաբերելու մասին» N 59-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները. 1) վերնագրում «նվիրաբերելու» բառը փոխարինել «նվիրատվության կարգով օտարելու» բառերով, 2) նախաբանում և որոշման 1-ին կետում 161,39 (մեկ հարյուր վաթսունմեկ ամբողջ երեսունինը հարյուրերորդական) թիվը և բառերը փոխարինել «161,09 (մեկ հարյուր վաթսունմեկ ամբողջ ինը հարյուրերորդական) թվով և բառերով: 3) որոշման 1-ին կետում «նվիրաբերել» բառը փոխարինել «նվիրատվության կարգով օտարել» բառերով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 196-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

**34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N 109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 109-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանում «Ագնեսա» բառը փոխարինել «Ագնեսյա» բառով,

2) որոշման հավելվածի 6-րդ կետի 3-րդ սյունակի «Ագնեսա» բառը փոխարինել «Ագնեսյա» բառով, 7-րդ սյունակի «80.79» թիվը փոխարինել «198.07» թվով և 8-րդ սյունակի «315081» թիվը փոխարինել «772473» թվով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 197-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***35.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ սահմանելու մասին» N 138-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի 2-րդ սյունակի «10» թիվը փոխարինել «12» թվով, 6-րդ սյունակի «3 000 000» թիվը փոխարինել «1 500 000» թվով.

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ սահմանելու մասին» N 34-Ա որոշման հավելվածի 29-րդ կետի 2-րդ սյունակի (10) թիվը փոխարինել (9) թվով և 6-րդ սյունակի «310000» թիվը փոխարինել «1100000» թվով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 198-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***36. ՄԿՐՏԻՉ ԱՐՏԱՇԵՍԻ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(ՁԵԿ. ՌՈՒԴԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ)*

Մկրտիչ Արտաշեսի Փահլևանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող «ԳԱԶ 31105» (GAZ 3105) մակնիշի, 04 SO 045 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2014 թվականի հունվար ամսից մինչև 2024 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով: Տրանսպորտային միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է Մկրտիչ Արտաշեսի Փահլևանյանին, 2013 թվականի փետրվարի 09-ին վթարի է ենթարկվել, որի պատճառով դարձել է շահագործման համար ոչ պիտանի և ենթակա է հաշվառումից հանման խոտանման պատճառով (հիմք՝ դատական վճիռ ԵԱՔԴ 1810/02/13, որոշում քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին, եզրակացություն և արձանագրություններ՝ կազմված 2013 թվականի փետրվարի 12-ին): Տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավորապես հանվել է 2014 թվականի հունվարի 14-ից և մինչ օրս համարվում է ժամանակավոր հաշվառումից հանված (հիմք՝ տրանսպորտային միջոցը պետական հաշվառումից ժամանակավոր հանված լինելու մասին N7/7 14/17060-24 և N 642111 տեղեկանքները, տրված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության գրանցման-հաշվառման և քննական հյուսիսային կենտրոնի պետ՝ Մովսեսյանի կողմից): Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Մկրտիչ Արտաշեսի Փահլևանյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Մանուկյան փողոց 157 տուն հասցեում, նույնականացման քարտ 001712421, տրված՝ 2015 թվականի մարտ 15-ին, ոստիկանության 016-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ 3708620488) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2024թվականի փետրվարի 09-ին N2623 թվագրմամբ)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել արտոնություն Մկրտիչ Արտաշեսի Փահլևանանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2024 թվականի սեպտեմբերի 10-ի դրությամբ 2014 թվականի հունվար ամսից մինչև 2024 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 282.000 (երկու հարյուր ութսուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը 2014 թվականի հունվար ամսից մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար կազմում է 136.440 (մեկ հարյուր երեսունվեց հազար չորս հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 59.262 (հիսունինը հազար երկու հարյուր վաթսուներկու)ՀՀ դրամ, 2021 թվականի հունվար ամսից մինչև 2024 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար մայր գումարը կազմում է 73.125 (յոթանասուներեք հազար հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 13.173(տասներեք հազար հարյուր յոթանասուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը մայր գումարը կազմում է 209.565 (երկու հարյուր ինը հազար հինգ հարյուր վաթսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ տույժը՝ 72.435 (յոթանասուներկու հազար չորս հարյուր երեսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մկրտիչ Արտաշեսի Փահլևանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 199-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***37.ՄԻՇԱ ԱԼԵՔՍԱՆԻ ԽԱԼԱԹՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2024ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ՌՈՒԴԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ)***

Միշա Ալեքսանի Խալաթյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող «ԲԷԷՄԴԱԲԼՅՈՒ ԻՔՍ 5 4.4 Ի» (BMW X5 4.4I) մակնիշի, 99 DN 996 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2019 թվականի մայիս ամսից մինչև 2024 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

Տրանսպորտային միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է Միշա Ալեքսանի Խալաթյանին, 2019 թվականի ապրիլի 21-ին այրվել է, որի պատճառով պիտանի չի եղել հետագա շահագործման համար և ենթակա է հաշվառումից հանման խոտանման միջոցով (հիմք՝ տեղեկանք N 165482, տրված 2024 թվականի հուլիսի 26-ին, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման գործերի նախարարության Մոսկովյան մարզի գլխավոր վարչության կողմից, տեղեկանք N 71/сл-б/н, տրված 2024 թվականի հուլիսի 22-ին Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության Մոսկովյան մարզի գլխավոր վարչության կողմից): 2018 թվականի համար հաշվարկված տույժը և 2019թվականի հունվար ամսից մինչև 2019 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորության գումարը կազմել է ընդամենը 68.423(վաթսունութ հազար չորս հարյուր քսաներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, որը Միշա Ալեքսանի Խալաթյանը պարտավորվել է վճարել:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Միշա Ալեքսանի Խալաթյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Եղիշե Չարենցի փողոց 1 շենք, բնակարան 22 հասցեում, անձնագիր՝ AV0518407, տրված՝ 2022թվականի նոյեմբերի 14-ին, ոստիկանության 016-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ 1214590084) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2024թվականի օգոստոսի 08-ին N13083 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն Միշա Ալեքսանի Խալաթյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2024 թվականի սեպտեմբերի 10-ի դրությամբ 2019 թվականի մայիս ամսից մինչև 2024 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 921.050 (ինը հարյուր քսանմեկ հազար

հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը 2019 թվականի մայիս ամսից մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար կազմում է 232.500(երկու հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 72.512 (յոթանասուներկու հազար հինգ հարյուր տասներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ 2021 թվականի հունվար ամսից մինչև 2024 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար մայր գումարը կազմում է 523.125 (հինգ հարյուր քսաներեք հազար հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 92.913 (իննսուներկու հազար ինը հարյուր տասներեք) Հայաստանի Հանրապետության դրամ: Ընդամենը մայր գումարը կազմում է 755.625 (յոթ հարյուր հիսունհինգ հազար վեց հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը կազմում է 165.425(մեկ հարյուր վաթսունհինգ հազար չորս հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Միշա Ալեքսանի Խալաթյանին պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 200-Ա)*

ԼՍԵՑԻՆ

***38. ԼԵՎՈՆ ԳԵՎՈՐԳԻ ՄԱԹՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2024ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՌՈՒԴԻԿ ԽՄՐԱՅԵԼՅԱՆ)***

Լևոն Գևորգի Մաթոսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող «ՄԵՐՍԵԴԵՍ-ԲԵՆՑ Ե 430» (MERCEDES-BENZ E 430) մակնիշի, 34 ZR 752 հաշվառման համարանիշով (հիմք՝ տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր N HB400899) տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2018 թվականի հոկտեմբեր ամսից մինչև 2024 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

Տրանսպորտային միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է Լևոն Գևորգի Մաթոսյանին, 2018 թվականի սեպտեմբերի 11-ին այրվել է, որի պատճառով պիտանի չի եղել հետագա շահագործման համար և ենթակա է հաշվառումից հանման խոտանման միջոցով (հիմք՝ «Փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Պետրոսյանի կողմից 2020 թվականի հուլիսի 21-ին տրված N 23421904 գրությունը, որին կցված է փորձագետի եզրակացությունը՝ առդիր յոթ թերթից, լուսանկարները՝ քսանութ հատ): 2014 թվականի հոկտեմբեր ամսից մինչև 2018 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորության գումարը կազմել է 789.397(յոթ հարյուր ութսունինը հազար երեք հարյուր իննսունյոթ)Հայաստանի Հանրապետության դրամ, որը Լևոն Գևորգի Մաթոսյանը պարտավորվել է վճարել մինչև 2024 թվականի սեպտեմբերի 10-ը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ

հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Լևոն Գևորգի Մաթոսյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Մուշ 2 թաղամաս, 11-րդ փողոց, 3 շենք, 48 բնակարան հասցեում, անձնագիր՝ AU0637031, տրված՝ 2023թվականի փետրվարի 13-ին, ոստիկանության 016-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ 3808930398) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2024թվականի հունիսի 12ին N 10251 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն Լևոն Գևորգի Մաթոսյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2024 թվականի սեպտեմբերի 10-ի դրությամբ 2018 թվականի հոկտեմբեր ամսից մինչև 2024 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 995.745 (ինը հարյուր իննսունյոթ հազար չորս հարյուր հիսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը 2018 թվականի հոկտեմբեր ամսից մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար կազմում է 302.063(երեք հարյուր երկու հազար վաթսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 100.829 (մեկ հարյուր հազար ութ հարյուր քսանինը) ՀՀ դրամ, իսկ 2021 թվականի հունվար ամսից մինչև 2024 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար մայր գումարը կազմում է 503.442 (հինգ հարյուր երեք հազար չորս հարյուր քառասուներկու)Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 89.411 (ութսունինը հազար չորս հարյուր տասնմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը մայր գումարը կազմում է 805.505 (ութ հարյուր հինգ հազար հինգ հարյուր հինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 190.240 (մեկ հարյուր իննսուն հազար երկու հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լևոն Գևորգի Մաթոսյանին պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 201-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***39. ԳԵՎՈՐԳ ՄԱՐՏԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2008ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2022ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ԶԵԿ. ՌՈՒԴԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ)***

Գևորգ Մարտինի Կարապետյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ իր անվամբ հաշվառված «ՎԱԶ 21063» (VAZ 21063) մակնիշի, 45 OU 486 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2008թվականի հունվար ամսից մինչև 2022 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

Տրանսպորտային միջոցը, որը 2002 թվականի նոյեմբերի 27-ից սեփականության իրավունքով պատկանում էր Գևորգ Մարտինի Կարապետյանին, 2005 թվականի հունիսի 15-ին առուվաճառքի պայմանագրի հիման վրա փոխանցվել է Հարություն Թորոյանին

(հիմք՝ ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիր՝ հաստատված Գյումրիի նոտարական տարածքի նոտար Սեդա Բաղդոյանի կողմից 2005 թվականի հունիսի տասնհինգին), սակայն այն չի գրանցվել Հայաստանի Հանրապետության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Գյումրիի քննական բաժանմունքում և մինչ օրս հաշվառված է Գևորգ Մարտինի Կարապետյանի անվամբ, իսկ Հարություն Թորոյանը մահացել է 2008 թվականի փետրվարի 01-ին (հիմք՝ մահվան վկայական ԱԱ N 114146)։Տրանսպորտային միջոցը 2011 թվականի հունվարի 14-ին ժամանակավոր հանվել է հաշվառումից և մինչ օրս գտնվում է ժամանակավոր հաշվառումից հանված վիճակում (հիմք՝ N 17/7 և N 7/714/99776-24 գրությունները, տրված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության գրանցման-հաշվառման և քննական հյուսիսային կենտրոնի պետի կողմից), ենթակա է հաշվառումից հանման։ Գևորգ Մարտինի Կարապետյանը ծառայողական պարտականությունները կատարելիս վիրավորվել է և հանդիսանում է երկրորդ խմբի հաշմանդամ (հիմք՝ N ՊՆ-36/4177 տեղեկանքը, տրված 1999 թվականի օգոստոսի 16-ին Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության սոցիալական պաշտպանության վարչության պետ Հարությունյանի կողմից)։

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Գևորգ Մարտինի Կարապետյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Պեմզաշեն փողոց 1-ին նրբանցք, 7 տուն հասցեում, նույնականացման քարտ 013292347, տրված՝ 2022թվականի նոյեմբերի 04-ին, ոստիկանության 021-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ 3307770012) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2024թվականի մայիսի 30-ին N 9410 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.** 1.Սահմանել արտոնություն Գևորգ Մարտինի Կարապետյանի անվամբ հաշվառված տրանսպորտային միջոցի գույքահարկի 2024 թվականի սեպտեմբերի 10-ի դրությամբ 2008 թվականի հունվար ամսից մինչև 2022 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 150.800 (մեկ հարյուր հիսուն հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը 2008 թվականի հունվար ամսից մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար կազմում է 89.608(ութսունինը հազար վեց հարյուր ութ) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 43.560 (քառասուներեք հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, իսկ 2021 թվականի հունվար ամսից մինչև 2022 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար մայր գումարը կազմում է 13.800 (տասներեք հազար ութ հարյուր)ՀՀ դրամ, տույժը՝ 3.832 (երեք հազար ութ հարյուր երեսուներկու) Հայաստանի Հարապետության դրամ։Ընդամենը մայր գումարը կազմում է 103.408 (մեկ հարյուր երեք հազար չորս հարյուր ութ) Հայաստանի Հարապետության դրամ, տույժը կազմում է 47.392 (քառասունյոթ հազար երեք հարյուր իննսուներկու) Հայաստանի Հարապետության դրամ։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գևորգ Մարտինի Կարապետյանին պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից։

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 202-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***40. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՆԵՐԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ԿԱՆՈՆԱՎՈՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ԶԵԿ. ԽԱՉԱՏՈՒՐ ՍՈՒԼԹԱՆՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետի 3-րդ ենթակետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանումները կանոնավորելու նպատակով կատարել անվանափոխումներ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ աշխատակազմ) քաղաքաշինության և հողօգտագործման բաժնին՝

1) իրականացնել անհրաժեշտ գործողություններ կապված անվանափոխումների հետ այդ թվում նաև անվանատախտակների նախագծման, պատրաստման և տեղադրման աշխատանքները,

2) սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ընդունելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել աշխարհագրական անվանումների ռեգիստր վարող պետական լիազոր մարմնին՝ անվանափոխման պետական գրանցում իրականացնելու համար,

3) անվանափոխումների վերաբերյալ տեղեկություններ տրամադրել Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Շիրակի մարզային վարչության «Կումայրի» և «Մուշ» բաժիններին, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության «Կումայրի» և «Մուշ» անձնագրային բաժանմունքներին:

3. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնին՝ ապահովելու անվանատախտակների նախագծման, պատրաստման և տեղադրման համար անհրաժեշտ վճարումը՝ համաձայն ներկայացվող ակտերի:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 203-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***41. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ԶԵԿ. ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 171-Ն որոշման 1-ին կետով հաստատված կանոնակարգի 96-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական երկրորդ նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի հոկտեմբերի 11-ը՝ ժամը՝ 12:00:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 204-Ա)*

**Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Լ. ՍԱՆՈՅԱՆ

Գ. ՄԵԼԻՔՅԱՆ

Մ. ՍԱՀԱԿՅԱՆ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ

Գ. ՊԱՍԿԵՎԻՉՅԱՆ

Խ. ՎԱՐԱԺՅԱՆ

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հ. ԱՍԱՏՐՅԱՆ

Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ճ. ԱՐԱՄՅԱՆ

Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ

Ն. ԲԵԳՉԱԴՅԱՆ

Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Պ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կ. ՍՈՍՅԱՆ

Ս. ԱԴԱՄՅԱՆ

Ն. ՄԻՐԶՈՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք. Գյումրի
2024թ. սեպտեմբերի 10